

«Հանդէս Ամսօրեայ»ի մէջ մաս առ մաս <sup>1</sup>, չէի յուսար քէ այս ընդարձակ ծաւալն պիտի առնէ: Ծրագրիս ընդլայնումը կէս քանակապահի վրայ՝ հարկ դրաւ վրաս Ա. Մասն արտատպութեան մէջ նոր խմբագրութեան ենթարկել: Նոր են հոս 9<sup>2</sup>, 10 եւ 15 գլուխները. ուրիշ գլուխներ կրած են մեծ եւ փոքր փոփոխութիւններ: Լոյս կը տեսնէ հոս Մովսիսի Ողբն ի մահն Սրապիոն Ուրիայեցոյ ամբողջութեամբ. այս առթիւ իմ սրտագին շնորհակալութիւնս Արիստակէս Նշանեան Մեսրոպ Սրբազանին, որ համեցաւ համեմատել գայն Երուսաղէմեան ձեռագրին հետ:

Ուրախ եմ, որ աշխատութիւնս գտած է ընթերցողներու բարեացակամ հանութիւնը: Թանկագին են ինձ մասնաւորապէս երկու բարձրաստիճան եւ պատմական-մատենագրական ուսումնասիրութիւններով փաջանուն Եկեղեցականներու վկայութիւնները. Տ. Գարեգին արքեպիսկոպոս Յովսէփեան կը գրէր ինձ 1933, Նոյեմբեր 4ին էջմիածնէն. «Կարդացել եմ Ձեր գրած յօդուածի մի հատուածը Մովսէսի մասին եւ շատ հաւանել. առարկայական եւ ժամանակակից աղբիւրների հիման վրայ իրական պատկեր»: Եւ Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան կը գրէր Երուսաղէմէն (31 Յունուար 1935). «Հանդէսի մէջ շահա-

<sup>1</sup> Հ ա ն դ է ս Ա մ ս օ Ր Ե ա յ, 1933, էջ 161—209, 285—414, 513—533. 1934, էջ 1—27, 235—259, 481—533:

<sup>2</sup> Նախ լոյս տեսած Հ ա ն դ. Ա մ ս., 1935, էջ 24—33: